

Ս. Ս. Մանուկյան

ՊԵՍՋԱՇԵՆԻ ԶՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՄԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պեճաշենի հուշարձանների շարքում ուշադրություն է գրավում գյուղի արևմտյան մասում գտնվող խաչքարի մի պատվանդան՝ հետաքրքրական արձանագրությամբ:

Առաջին անգամ այս հուշարձանը նկատելի է չափազանց է թ. թորմանյանը: Ներկայումս խաչքարը անհայտ կորել է, սակայն ոչ հեռավոր անցյալում այն դեռևս գոյություն ուներ: Թ. թորմանյանի հանդիպած ժամանակ խաչքարի որոշ մասեր տակավին տեղում էին: «Եկեղեցու արևմտյան կողմը,— գրում է թ. թորմանյանը,— մոտավորապես 200—300 քաջ հեռավորության վրա կգտնվի մի հույակապ գերեզմանի փլատակը գեղաքանդակ հսկա խաչքարով և մի երկար արձանագրությամբ՝ միակտուր քարի վրա: Խաչքարին կեսը կոտրած և անհայտացած է, իսկ արձանագրության մեկ մասը վնասված է, այնուամենայնիվ բավականին տառերը մաքուր պահված և արձանագրությունը ընթերցելի է»:

Այժմ միայն պատվանդանն է մնացել: Նրա վերջին, աջ անկյունից կոտրվել է մի մեծ հատված, որի հետևանքով պակասում են արձանագրության առաջին երեք տողերի վերջավորությունները: Կոտրվածքների հետևանքով տուժել է նաև տողերի սկիզբը, առանձնապես ստորին մասում, սակայն արձանագրությունը հեշտությամբ վերականգնվում է: Նրա առաջին տողը փորագրված է խոշոր և գեղեցիկ տառերով, այնուհետև տառերը փոքրանում են: Վերջին իններորդ տողում խիստ սեղմված են: Վերջին, ինչպես և նախավերջին տողի երկրորդ կեսը տարբերվում են արձանագրության հիմնական մասից ոչ միայն տառերի չափերով, այլև տառաձևերով: Ամենայն հավանականությամբ արձանագրությունն ավարտվել է այլ գրչի կողմից:

Այս արձանագրությունը ունի շինարարական և միաժամանակ նվիրատվական բովանդակություն: Խաչքար կանգնեցնողը եղել է Սարգիս անունով մի անձնավորություն, որն իրեն հայր է անվանում, հավանաբար՝ հիշատակելով իր հոգևորական լինելը: Խաչքարը նա կանգնեցրել է ի հիշատակ իրեն և ի բարեխոսություն յուր տիրոջ Ապիսարիի, որը մեծ նվերներ է արել ս. Զորավարաց վանքին: Այս արձանագրությունը Սարգսի մասին եղած միակ տեղեկությունն է: Ամենայն հավանականությամբ նա եղել է նշված վանքի միաբաններից մեկը, թերևս և վանահայրը և այնքանով, որ Ապիսարիին անվանում է իր տերը, պետք է ենթադրել, որ այդ եկեղեցին գրտնրվելիս է եղել վերջինիս կալվածքում:

Արձանագրությունը թվագրված է ՆՁԵ (1036) թվականով:

Ելնելով բովանդակությունից, ինչպես նաև տառերի պահպանված բնկորներից և տեղադրման հնարավոր տարածությունից, առաջին տողի պակասավոր հատվածը կարող ենք այսպես վերականգնել. ԿԱՆ ԳՆԵՅԻ ՍՈՒՐԲ ԽԱՉՍ Ի ՅԻ ՇԱՏԱԿ ԺԵՈՎ: Երկրորդ տողի վերջավորության խնդիրը շատ ավելի բարդ է, նախ այն պատճառով, որ պակասող տարածությունը համեմատաբար ավելի մեծ է, իսկ այնուհետև, ինչպես երևում է տողի բովանդակությունից, այստեղ հիշատակվել է Ապիսարիի տիրոջը: Այդ տիրոջ մասին եղած հիշատակությունը սկսվում է պահպանված մասի վերջից ՀԱՅՈՅ ԵՒ... արտահայտությամբ: Հիշատակված ՀԱՅՈՅ ԵՒ... բառը վկայում է Ապիսարիի մի այնպիսի տիրոջ մասին, որը, բացի իր տոհմական նշանակությունից, ունեցել է նաև ավելի լայն շրջանակներ: Այս հանգամանքը չափազանց կարևոր է պատմական աղումով, որովհետև պատմիչներն այդ մասին տեղեկություն չեն պահպանել:

Ապիսարիի մասին եղած վկայություններից մեծ կարևորություն են ներկայացնում Անիի ու Փրկիչ և ս. Գրիգոր Պահլավունյաց եկեղեցիների արձանագրությունները, որոնցից պարզվում է, որ նա սերվել է Պահլավունիների տոհմից, եղել է երկրի մարզպանը, սպարապետը: Իմացվում է նաև, որ Հովանես-Սմբատ թագավորի օրոք, իր մարզպանության շրջանում, 1035 թ. հրովարտակ ստանալով թագավորից, մեկնել է Կ. Պոլիս Միխայիլ (1034—1041) կայսեր մոտ ս. Խաչի մասունքները բերելու: Անիում կառուցել է ս. Փրկիչ եկեղեցին, Մարմաշենում մասնակից է եղել տեղի հույակավոր եկեղեցու շինությանը և այլն:

1 Հայկական ճարտարապետություն, հ. 2-րդ, Երևան, 1948, էջ 244:

Պահպանությունները կալվածքներ են ունեցել Շիրակի տարրեր մասերում: Ինչպես վկայում է այս արձանագրության նվիրատվության ցանկը, Ապխարիբի սեփականությունն է եղել Բաղդիճ գյուղը, և, որ, ամենահետաքրքիրն է՝ գոյություն է ունեցել նրա անունը կրող «Ապխարիպաշեն» գյուղը ևս, որոնք նա նվիրարեցել է ս. Զորավարաց եկեղեցուն: Պահպանությունները ժամանակին դիտվել են որպես Կամսարականների տոհմի շառավիղ (Լուսավորչի տոհմին զուգընթաց): «Ան-հայտությունն մատնած Կամսարական շառավիղներից մեկն, — գրում է Կ. Կոստանյանը, — Արտակ Կամսարական, Թ դարում հին տոհմի վերանորոգության սկիզբ է դրում: Այնուհետև նա պատկե-րում է այդ սերումը հետևյալ կերպ՝ 1. ԱՐՏԱԿ — 2. ԱՊՈՒՂԱՄԲ — 3. ԳՐԻԳՈՐ ՀԱՄԶԷ — 4. ՎԱ-ՍԱԿ — 5. ԳՐԻԳՈՐ ՄԱԿԻՍՏՐՈՍ: Ի դեպ, Կ. Կոստանյանի համար հիմք է ծառայել Անաստաս անունով 9-րդ դարի մի վարդապետի չափազանց կարևոր հիշատակությունը այն մասին, որ ոմն Նամազասպ Կամսարական-Պահպանության պատվիրել է սրան կազմել Նրուսաղեմի վանքերի ցու-ցակը»:

Ներկայացրած շառավիղում Ապխարիբի սերում է 4-րդ սերնդից: Նա եղել է Գրիգոր և Շու-շան Պահպանությունների որդին, Վասակ, Վահրամ և Համգե Պահպանությունների եղբայրը և Գրիգոր Մագիստրոսի հորեղբայրը: Իր հորեղբայրների մասին Գրիգոր Մագիստրոսը միայն մի տեղ է հիշատակում⁵, անվանելով նրանց Տիգրան և Գրիգոր: Հետաքրքրական է Կ. Կոստանյանի Տիգ-րան անվան մեկնությունը՝ «Մագիստրոսը յիշում է, որ իր հորեղբայրը Վահրամ ունեցել է և երկու հարազատներ, որոնք իրենից յառաջ թողել են աշխարհը, Տիգրան և Գրիգոր: Այժմ առաջ ունենալով, որ Մագիստրոսը ոչ մի տեղ իր հորեղբոր Ապխարիպի անունը չի յիշում, պետք է դարձել, որ Տիգրանը նույն Ապխարիպն է, իսկ Գրիգորը նույն Համգեն: Պահպանության անսո-վոր չէ կրկնակի անունը»:

Այս կարծիքին համաձայնել է նաև Հ. Անճառյանը⁷: Սակայն ամենակարևոր տեղեկությունը, որը պետք է ոգևորի արձանագրության երկրորդ տողի վերջավորությունը վերականգնելուն, բնա-նում է Աշոտ Ողորմածի, այսպես կոչված, կեղծ նվիրագիրը: Այս նվիրագիրը հրատարակել է Սմբատյանը: Նվիրագիրն ունի հետևյալ բովանդակությունը. Աշոտ Ողորմածը այցելում է Վաս-պուրականի հյուսիս-արևելյան կողմերը գտնվող Ճվաշ կոչված ավանը, արծաթադրամով ձեռք է բերում տեղական հանդերը և այն նվիրում Մաղարդավանքին, ս. Ստեփանոս Նախավկային, ս. Աստվածածնին, ս. Գևորգ և այլ եկեղեցիներին: Այստեղ էլ հիշատակված է երկրի մարզպան Ապխարիբի մի շատ կարևոր տիտղոսով՝ «Վկայությունամբ իշխանաց իշխանի հայոց և վրաց մե-ծին Ապխարիպայ սպարապետին»⁸: Այս տիտղոսը հիշատակված է ևս մեկ անգամ՝ Աշոտ Ողոր-մածի դստեր՝ Հռիփսիմեի նվիրատվական կտակագրում: Հիշյալ կտակագրով Աշոտ Ողորմածի դուստրը նվիրատվություն է անում ս. Նախավկայի եկեղեցուն, նշելով, որ այդ մասին արձա-նագրվել է նաև մի այլ սկզբնաղբյուրում՝ «Ի սբ. Ծովհանէս ուխտատեղոջ Աստապատայ»:

Այդտեղ մեզ հետաքրքրող տիտղոսի վերաբերյալ կարևոր տեղեկություն կա՝ «Աւարտումն եղև կտակագրիս, հրամանաւ մեծի թագաւորացնոյն Հռիփսիմէի, թելադրութեամբ տն. Բարգէնայ արհեստակրոսի և վկայութեամբ մեծի իշխանացն հայոց Վասլա իշխանին վրաց որդոյն Ապըլ-խարիպայ»⁹... և այլն: Նույն փաստը այստեղ բերված է այլ առումով: Եթե առաջին վկայության մեջ Ապխարիբը հիշատակված է որպես հայոց և վրաց իշխանաց իշխան, ապա երկրորդից պարզվում է, որ նա ունեցել է որդի, անունը Վասիլ և այդ որդին հորից ժառանգել է նրա բազ-մաթիվ տիտղոսներից մեկը՝ վրաց իշխան տիտղոսը:

Ապխարիբի անունը այս տիտղոսով հիշատակվել է նաև հաշիկ կաթողիկոսին վերագրվող կոնդակում, որով վերջինս արձագանքել էր Աշոտ Ողորմածի մեծածախ նվիրատվություններին: Ապխարիբի մասին նա հիշատակում է հետևյալ ձևով՝ «Ապխարիբի իշխանի հայոց և վրաց»¹⁰:

Այս տեղեկություններին պետք է ավելացնել, որ մեր արձանագրության մեջ ՀԱՅՈՑ ԵՒ... արտահայտությունը հաջորդում են, կոտրվածքների միջից հազիվ նշմարվող ՎՐ տառերը: Այս-

2 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ ԺԳ, Ալեքսանդրոպոլ, 1910:

3 Նույն տեղում, էջ ԺԴ:

4 Երանելոյ Անաստասայ հայոց վարդապետի դրևալ զանուանս վանօրէից, որ ի ս. քաղաքն Երուսաղեմ, էջ 11, Վենետիկ, 1596:

5 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 41, Ալեքսանդրոպոլ, 1910:

6 Նույն տեղում, էջ ԺԶ:

7 Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, էջ 150, Երևան, 1962:

8 Նկարագիր ս. Կարապետի վանից Երնշակայ և շրջակայից նորա, Թփղիս, 1904, էջ 419:

9 Նույն տեղում, էջ 422—425:

10 Արարատ (ամսագիր), Վաղարշապատ, 1868, էջ 33:

պիսով, եղած տեղեկությունները հնարավորություն են տալիս երկրորդ տողի վերջավորությունը վերականգնել **ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ...** ձևով: Տիտղոսին հաջորդել է մի բառ, որն, ինչպես երևում է պահպանված մասից, ավարտվել է **Դ** տառով: Այս տառին նախորդում է ստորին ելուստ ունեցող մի այլ տառ: Կոտրվածքի ձևից երևում է, որ այն կարող է պատկանել **Ժ**, **Լ**, **Ղ** տառաձևերի աջակողմյան ստորին ելուստներին: Դ ստացական հոգի կիրառության մեթակայական դերայի ՈՂԴ վերջավորությունը կաղմել նրանք չեն կարող առնվազն այն պատճառով, որ դա չի համապատասխանի շարադրանքին: Ուշագրավն այն է, որ վերջնատառից կարող է կասկածի տակ առնվել նաև **ԻՇԽԱՆԻ** բառը: Ապիսարիի վերաբերյալ տեղեկություններից մեկում նրան անվանում են **ժՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ ԻՇԽԱՆ**, իսկ մյուսում՝ **ժԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ**: Թերևս այստեղ հիշատակվել է **ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ ԻՇԽԱՆԻ** ձևով: Այս դեպքում չվերծանված տարածությունը մեծանում է և տեղ է բացվում հաջորդ շառերի համար, որոնք այս անգամ շատ ավելի մեծ տարբերակներ կարող են ունենալ: Բոլոր դեպքերում միայն վերջնատառի հիման վրա բացակայող բառը, իսկ դուրս և նախադասության վերականգնելն անհնարին է, ուստի պետք է բավարարվենք միայն Ապիսարիի տիտղոսի վերականգնմամբ:

Վնասված տողերից առավել սուեղծվածայինը երրորդ տողի վերջավորությունն է: Եթե նախորդ տողում պատմական տեղեկությունները հնարավորություն տվեցին բացակայող հատվածը մասամբ վերականգնել, ապա այստեղ նման ոչ մի օժանդակ աղբյուր չկա, որովհետև այս հատվածը պատմական որևէ փաստ կամ անուն չի հիշատակում: Տառերի պահպանված մնացորդներից երևում է, որ **ՋԱԻՐԱՎՐԱՑՍ** բառին հաջորդում է **Յ** տառը: Այնուհետև երևում են տառաձևերի շափաղանց անորոշ առանձին գծեր: Այդ պակասավոր տարածությունում կարող էր տեղադրվել **12—13** տառ: Շարունակության մեջ պարզ նշմարվում է **Ձ** տառը: Այս տառից առաջ գտնվող բառից սկսվում է նվիրաբերած պարագաների ցանկը: **Ջ**-ն, թերևս նվիրատված ինչ-որ արյևկտի անվան հայցական հոլովի նախդիր է: Նրանից առաջ պահպանվել է **Լ** տառի ստորին ելուստը և վրան իջնող ուղղահայաց ստեղծի հետքը: Ցավոք, պահպանված մեկ տառի միջոցով հնարավոր չէ վերականգնել նվիրաբերված պարագայի անունը, հետևաբար առաջին երկու անունները թողնում ենք չվերականգնված և այնքանով, որ այս արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ, տալիս ենք նրա դժվար վերծանելի հատվածների նկարագրերը: **Ձ** և **Յ** տառերի միջև տեղադրված է եղել մեկ բառ, որը սկսվել է **Յ** տառերով: Եթե **Յ** տառը պահպանվել է, ապա հաջորդող **Ի** տառից մնացել է միայն ուղղահայաց ստեղծի կեսը: Տառի զբաղեցրած տարածությունից, ինչպես և հաջորդ տառաձևի մնացորդից, երևում է, որ նրանց միջև պետք է անպայման ձայնավոր լինեն, իսկ ձայնավորների մեջ՝ միայն **Ի** տառը: Սրան հաջորդողը կարող է Ս կամ Մ լինել: Մեր կարծիքով, այստեղ ավելի հավանական է տեղանուն ենթադրելը: Արձանագրությունն, իր այս մասնակի վերականգնված վիճակում, ունի հետևյալ բովանդակությունը.

1. **ՆՁԵ ԹՈՒԱԿԱՆԻԴ ԵՍ ՀԱՅՐ ՍԱՐԳԻՍ ԿԱՆԳՆԵՅԻ ՍՈՒՐԲ ԽԱՉՍ Ի ՅԻՇԱՑ**
2. **ԱԿ ԻՆՁ ԵՒ ԲԱՐԵԽԱԻՍ ՏՆ ԻՄՈՅ ԱՊԼԽԱՐԳԱ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ...**
3. **ՋԱՄԵՆԱՅՆ ԲԱՐԻ ՅԱԻՐԻՆՈՒԱԾՍ ԵՆԴՐՁԵԱՑ ՍՈՒՐԲ ՋԱԻՐԱՎՐԱՑՍ ՅԻ...**
4. **...ԱԹԲ, ԵՒ ՋԱՅԳԻՆ ԲԱԴՈՐՃԻ, ԵՒ ՋԱՅԳԻՆ ԱԼԽԱՐԻՊԱՇԻՆԻ, ՍԱՐԻՆ ՋՄԱՐԳՆ, ՋԱՐԱՂԱՀԱՐՆ, ԵՒ**
5. **ԵՂՋՈՒՐՆ ՋԱՒԱՀԱՆԱՑ, ՈՐ ԱՐԱՐ ՋԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԻՆ ԵՒ ՅԵՐԿՐԻ ԽԱՉԻՆ ԻԻՐՈ ՎԱՅԵԼՅԷ Ձ**
6. **ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏՆ ԻՄՈՅ ԱՍՑ ԵՒ Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԳԱԼՍՏԵԱՆՆ, ԵՒ ԻՄՈՅ ՀՈԳՈՅ ԱՊԱԻՆԻ Լ**
7. **ՈՅՍ ՅԱՄ, ԵՒ Ի ՍՈՒՐԲ ԽԱՉ ՆՈՐԱ: ԱՐԴ ԵԹԵ ՈԲ ՅԱՊՇՏԱԿԵԼ ՋԱՆԱ Ի ՎԵՐԱ ԳՐՎՈՅՍ**
8. **Ի ՄԵԾԱՑ ԿԱՄ Ի ՓՈԲՈՒՆՑ ՅԺԸ-ԻՅՆ ՆՁՈՎԵԱԼ ԵՂԻՅԻ**

Ահա արձանագրության զծագրական պատճենը.

ՔՆՁԵԹՈՒԱԿԱՆԻԴԵՍՀԱՅՐՍԱՐԳ. ՍԿԱՆԳ
 ԱՆԽԱՐԵԲԱՐԵԽԱԻՍ ՏՆ ԻՄՈՅ ԱՊԼԽԱՐԳԱ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ...
 ՋԱՄԵՆԱՅՆ ԲԱՐԻ ՅԱԻՐԻՆՈՒԱԾՍ ԵՆԴՐՁԵԱՑ ՍՈՒՐԲ ՋԱԻՐԱՎՐԱՑՍ ՅԻ...
 ...ԱԹԲ, ԵՒ ՋԱՅԳԻՆ ԲԱԴՈՐՃԻ, ԵՒ ՋԱՅԳԻՆ ԱԼԽԱՐԻՊԱՇԻՆԻ, ՍԱՐԻՆ ՋՄԱՐԳՆ, ՋԱՐԱՂԱՀԱՐՆ, ԵՒ
 ԵՂՋՈՒՐՆ ՋԱՒԱՀԱՆԱՑ, ՈՐ ԱՐԱՐ ՋԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՅԵՐԿԻՆ ԵՒ ՅԵՐԿՐԻ ԽԱՉԻՆ ԻԻՐՈ ՎԱՅԵԼՅԷ Ձ
 ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏՆ ԻՄՈՅ ԱՍՑ ԵՒ Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԳԱԼՍՏԵԱՆՆ, ԵՒ ԻՄՈՅ ՀՈԳՈՅ ԱՊԱԻՆԻ Լ
 ՈՅՍ ՅԱՄ, ԵՒ Ի ՍՈՒՐԲ ԽԱՉ ՆՈՐԱ: ԱՐԴ ԵԹԵ ՈԲ ՅԱՊՇՏԱԿԵԼ ՋԱՆԱ Ի ՎԵՐԱ ԳՐՎՈՅՍ
 Ի ՄԵԾԱՑ ԿԱՄ Ի ՓՈԲՈՒՆՑ ՅԺԸ-ԻՅՆ ՆՁՈՎԵԱԼ ԵՂԻՅԻ

Ինչպես ասածինք, արձանագրությունը և՛ շինարարական և՛ նվիրատվական բնույթ ունի: Ընդ որում նվիրատվական մասը բավականին մեծ տարածություն է զբաղեցնում և, հավանաբար, արձանագրության զլխավոր իմաստն է արտահայտելու: 4-րդ տողից սկսվում են արդեն պարզ երևացող տեղանունները, որոնք նվիրաբերվել են հիշատակված եկեղեցուն: 4-րդ տողում նշված է երկու տեղանուն՝ ԲԱԴԻԸԺԻ և ԱԼԽԱՐԻՊԱՇԻՆԻ, Առաջինը գոյություն ունի նաև այժմ: Գտնվում է Արագածոտն գավառի մեջ, ներկայիս Աշտարակի մոտերքը: Հետագայում այն հայտնի է եղել Պատրիկի անունով: Ինչ վերաբերում է Ալխարիպաշենին, ապա ոչ մի տեղեկություն չի պահպանվել նրա աշխարհագրական տեղագրության և առհասարակ, որպիսության մասին: Չնայած այս տեղանունը հիշատակված է ԱԼԽԱՐԻՊԱՇԻՆԻ, և ոչ թե ԱՊԼԽԱՐԻՊԱՇԻՆԻ ձևով, այնուհանդերձ, կասկածից վեր է, որ այն Ալխարիբի անունն է կրում: Ելնելով այս հանգամանքից, պետք է ենթադրել, որ այն գտնվել է Ալխարիբի կավածքներում և, որ կարևոր է, նրա հատուկ անունը կրող բնակավայրը, որպես անվանատիրոջ սեփականություն, ամենայն հավանականությամբ կառուցվել է նրա կողմից:

Ալխարիբի նվիրաբերած անշարժ դույբը չափազանց մեծ է եղել: Մի այգի նա նվիրաբերել է Բաղդոնից (կամ մոտակայքից), մեկ այգի՝ Ալխարիբաշենից, այնուհետև՝ սարի մարզը: Այս տողում ուղագրություն է գրավում ՋԱԲԱՂԱՀԱՐՆ րառը: Բառահիմքի բաղադրիչ մասերից մեկը ԱՐԱՂՆ է: Այս րառը Տիրայր արքեպիսկոպոս Մաշկամբարյանը նույնացնում է «ուղի» բառի հետ, իսկ տարբերակում, որպես ածանցավոր՝ «արահետ»¹¹: ԱՐԱՂ րառը մոտավորապես նույն բովանդակությունն ունեցող տեքստում հանդիպում ենք Հովհաննես Երզնկացու մոտ¹²: Ա. Սրապյանը այն մեկնաբանել է որպես «երազ»¹³:

Առաջին ստուգաբանությունը հավաստի չէ այն պատճառով, որ ԱՐԱՂ րառը որպես րառարմատ. «ուղի» հասկացողության հետ մերձեցվում է իր ածանցավոր «արահետ» բառի միջոցով, միևնույն, պետք է ասել, որ «արահետ», բառի վերաբերյալ իր ստուգաբանությունն է տվել Հ. Աճառյանը, որպես «այր և հետք» այսինքն մարդու հետք, մեկ մարդու անցած նեղ ճանապարհի հետք¹⁴:

Իմաստի տեսակետից ևս «ճանապարհ» բմբոնումը դժվար է պատկերացվում նման նախադասության մեջ՝ «Յրիկ, զարթիր ի խոր քրնոյդ ճանապարհ(!) ւորա քեզ զնալու»: Զամոգիչ չէ նաև «երազ» ստուգաբանությունը: Հ. Աճառյանի մոտ «երազը» ստուգաբանված է «երևալ» բառով¹⁵: ԱՐԱՂ բառի հետ նրանք ոչ մի առնչություն չունեն:

Այս ստուգաբանությունները առավել անհամադիր են սույն արձանագրության մեջ հանդիսացած ԱՐԱՂԱՀԱՐՆ րառի բացատրության համար: ԱՐԱՂ րառը, մեր կարծիքով, արաբերենից փոխառյալ բառ է, որն ունի մի շարք իմաստներ¹⁶: Տվյալ ստուգաբանության համար կարևոր են նրա «օղի» և «քրտինք» իմաստները: ԱՐԱՂԱՀԱՐՆ մեր արձանագրության մեջ կարող է հասկացվել որպես օղի քաշելու առհեստանոց, իսկ Երզնկացու ու Յրիկի մոտ՝ աշխատանք, հոգս, քրտինք թափելու հասկացողությամբ, մանավանդ որ այն բերված է քննելուն, այն էլ «մեղայ» քնկոտությանը հակադրության ձևով՝ այսինքն գործ արա, պատրաստություն տես զնալուցդ առաջ և զարթիր ի քնոյ մեղայ:

Մեծ հետաքրքրություն է առաջացնում ավագանների մասին եղած տեղեկությունը, որին հանդիպում ենք 5-րդ տողում: Թե որտեղ են գտնվել դրանք, ներկայումս դժվար է ստույգ որոշել: Սակայն դրանց գոյությունը ինքնին կապված լինելով ռոգման հետ, պետք է որոնել եկեղեցուն պատկանող հողատարածությունների շրջակայքում: Ավագանների կառուցման փաստը մի կարևոր տեղեկություն է, որով քնութագրվում է Ալխարիբի և նրա հովանավորության ներքո գտնվող եկեղեցական հաստատությունների մոխ ծաղկումը: Բնագրավն այն է, որ արձանագրության մեջ խոսվում է ոչ թե ավագանների, այլ այդ ավագանների ջրի մասին, որով կարծես ուղում է ընդգծել ջրի հարցի հույժ կարևորությունը միջին դարերում:

¹¹ Յրիկ, Դիվան, Նյու-Յորք, 1952, էջ 551:

¹² Ձեռագիր 8188, 1424—1460 թթ., էջ 177ր:

¹³ Ա. Սրապյան. Հովհաննես Երզնկացի:

Աշխարհս չէ քեզ մնալոյ,

Է՛ր պարապիս դու ի լալոյ,

Երազ արա քեզ զընալոյ,

Յակոր, զարթիր ի քնոյ մեղայ:

¹⁴ Արմատական բառարան, հ. Ա, 615:

¹⁵ Արմատական բառարան, հ. Բ, էջ 747:

¹⁶ Баранов. Арабско-Русский словарь, стр. 652—653, Москва, 1957.

Արձանագրության մեջ հիշատակված մարգերի, ավագանների և արհեստանոցի մոտավոր տեղերը որոշելու համար անհրաժեշտ է պարզել դրանց նվիրատիրոջ՝ ու Ջորավարաց եկեղեցու տեղը։ Այս հարցի լուծման համար, մեր կարծիքով, կարևոր հանգամանք է իրենից ներկայացնում տվյալ խաչարձանի տեղը։ Այս խաչարձանը պատահական տեղ դրվել չէր կարող, այն պետք է դրվեր միաբանությանը մոտ, թերևս նրա բակում։ Այն տեղը, ուր ներկայումս գտնվում է խաչքարի պատվանդանը, միանգամայն համապատասխանում է իր նախկին, իսկական տեղին։ Այստեղ, խաչարձանի մոտ, կանգնած է կենտրոնադարձ մի եկեղեցի, իսկ շուրջը սփռված են այլ շինությունների հետքեր։ Կասկածից վեր է, որ այստեղ ժամանակին եղել են վանական մի շարք շինություններ, թերևս խոշոր միաբանություն։

Ինչպես վերը նշվեց, Պեմզաշենի այս արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ։ Ուստի մեր հիմնական նպատակը եղել է այն հնարավորին չափ լրիվ ներկայացնել, նրանում եղած կարևոր հարցերի վերաբերյալ մեր դիտողություններով և դատողություններով։

А. А. Манучарян

НЕОПУБЛИКОВАННАЯ НАДПИСЬ ИЗ ПЕМЗАШЕНА

Р е з ю м е

В данной статье впервые публикуется пемзашенская надпись высеченная на постаменте хачкара. Хачкар не сохранился и о его размерах можно судить только по весьма массивному постаменту.

Публикуемая надпись включает в себе весьма ценные сведения об одном из выдающихся деятелей XI века Аблхариба Пахлавунни. Надпись содержит также немало сведений экономического и географического характера. Особый интерес представляют сведения о постройках водохранилищ и мастерских сельскохозяйственного значения, из которые указывает этимология некоторых слов.